

քային կողմով կարող է ներս բերուել, իսկ նորա այն տեղերում միայն յարմար են, ուր վարակիչ նիւթը համարեա թէ ծովային ճանապարհով է միայն ներս բերվում: Ինչպէս են կղզիները, Խօլերային վերաբերեալ կարանտինական սիստիմայի հետեանքներն այնքան արդիւնաւոր չեն, որ կարելի լինէր շարունակել այդ թանգ միջոցները. ուստի և աւելի օգտաւէտ կլինէր եթէ միջերկրականի ծովեզերքներում տակաւին գոյութիւն ունեցող կարանտինական ձևերը խափանուէին և նոցա տեղը շինուէին նոր պահպանողական կամ քննողական կայարաններ, Վէնայի 1874 թ. առողջապահական ժողովի առաջարկութեանն համաձայն: Չվարակուած տեղերից եկած բոլոր նաւերն անմիջապէս կարող են նաւահանգիստ ընդունուիլ և ազատ մնալ առողջապահական տեսչութիւնից, Իսկ եթէ նաւերը վարակուած տեղերից են լինում և Խօլերայով հիւանդներ են ունենում, այն ժամանակ պէտք է հիւանդներին տեղաւորել առանձին հիւանդանոցներում: Նաւը բոլոր իւր բովանդակութեամբ, նոյնպէս և ճանապարհորդների և նաւի ծառայողների շորերը պատշաճաւոր կերպով մաքրել և դէզինֆեկցիական միջոցներ գործ դնել, և յետոյ ազատ թողնել թէ նաւին և թէ ճանապարհորդներին: Թէպէտ, ինչպէս ընթերցողին յայտնի է, դէզինֆեկցիան Խօլերայի թոյնի դէմ իբրեւ յատկանիշ միջոց պէտք չէ ընդունել, այլ միայն իբրեւ մաքրութիւն պահպանելու նպատակաւարմար եղանակ, բայց կարելի է ասել որ վերոյիշեալ առողջապահական կանոնները ճշգրտութեամբ կատարելով, վարակումը շտարածելու համար մեր կարողութեան չափ աշխատած կլինինք: Միւսնոյն ժամանակ ճանապարհորդների բոլոր անյարմարութիւնները և վաճառականական ճնշողութիւնը, որոնք լինում են սովորական կարանտինների պատճառով, բաւական կհեռացուին: Ինքն ըստ ինքեան կարանտինը Վէնայի ժողովի կարծիքով շատ խիստ պիտի չլինի և քննողական կարանտինը պէտք է շարունակել 1—7 օրից ոչ աւելի, իսկ ամենահարկաւոր դէպքերում 10 օր:

Գ Տ Գ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՐՆԵՐԸ:

(« Արարատ », Նոյեմբեր),

Քրիստոսի ծննդից յետոյ մինչև հինգերորդ դարի սկիզբն Հայերը չունէին իւրեանց տառերը և ըստ ամենայն հաւանականութեան ոչ մի գրաւոր գրականութիւն. թէև դժուար է երեւակայել, թէ ինչպէս կարող էր այդպիսի ընդարձակ տէրութիւնը մնալ երկար դարեր առանց իւր սեփական լեզուն գործածելու գրութեան մէջ, մինչդեռ նորա մերձակայ բոլոր ազգերն ի վաղուց ունէին իւրեանց գրերը: Սակայն կերելի թէ այսպէս էր Հայաստանում, որովհետև մինչև այժմն ոչ մի յիշատակարան չէ հակառակում այս

կարծիքին, Միւս կողմից, ենթադրելով որ Հայերը չունեին գրականական լեզու մինչև Ե. դարն, ապա ի՞նչով բացատրելու է նորա յանկարծ կրեւելը Ե. դարի առաջին կեսում լիովին մշակված, բնդ միշտ կանոնաւորված, բնդունակ ոչ թէ միայն ս. դիւրբը, այլ և յունական գրերի գտնվելու ժամանակից մինչև Ե. դարը դուրս եկած բոլոր կրեւելի գրուածներն հայերէն փոխարկելու *): Յունական դպրոցներում լուսաւորութիւն ստացող անձների գրչի տակ հայկական գրականական լեզուն մի սերունդի բնթացքում ոչ թէ միայն հարստացաւ յունական լեզուից եղած թարգմանութիւններով, այլ և ինքն յառաջ բերեց անսուածարանական, պատմական, ճարտասանական, թուարանական, քերականական, փիլիսոփայական և ուրիշ ինքնուրոյն գրուածներ: Մենք արդէն շատ անգամ յայանեցինք մեր կարծիքը որ ժողովուրդը կիսօտեր այն ժամանակն այն լեզուով, որ մօտ էր աւելի մեր ժամանակի բարբառներին **) քան թէ այն գրականական լեզուին, որ յանկարծ կրեւեցաւ Ե. դարում: Արեւելի էր այնպիսի մի ենթադրութիւն անկ, որ այն ժամանակի լուսաւորված Հայերն իբրեւ օրինակ ընդունեցին յունական լեզուն և իւրաքանչիւրն իւր քիմքին համաձայն մշակեց ժողովրդական լեզուից գրականականը, և այդպէսով փոքր առ փոքր յառաջացաւ այն գրականական լեզուն, որն կրկար ժամանակ Հայերի մէջ համարվեցաւ հայերէն կրօնական:

Բայց այսպիսի ենթադրութեան կհակառակին շատ հանգամանքներ. նախ, նորա ձևերի մէջ մենք կնկատենք որ նա բաւական կշեղվի այն ժամանակի ժողովրդական լեզուի ձևերից: Այն ժամանակի բոլոր մատենագիրների քերականութեան մէջ զարմանալի միութիւն կայ, ընայելով որ այս վերջիններս Հայաստանի զանազան գաւառների բնիկներն էին, և հետեւաբար անգիր խօսակցութեան մէջ պիտի պահպանէին զանազան բարբառներ, որոնք այժմ ևս շատ տարբեր են միմեանցից: Երկրորդ, նոքա բոլորը գործ կածեն գրութեան մէջ մի որոշ ուղղագրութիւն, որ աւելի կանոնաւոր է

(*) *Sten Sukias Somal. Quadro delle opere di vari autori, anticamente tradotte in Armeno. Venezia. 1325.* Այս գրքի մէջ ժողոված են սիրիական եւ յունական լեզուներից թարգմանված շարադրութիւնների անունները, հոցա մեծ մասը պահպանված է մինչև մեր ժամանակը, հոցանից մի քանիսն յառաջ բերենք սյուսեղ. Արիստոտելի շարադրութիւնները, Միծն Աղէքսանդրի կեանքը, որ գրած է Կեղծ Կալիֆէն, Պարթիւրոսի կենսագրութիւնը, Եւսեբէոսի, Փիլանի շարադրութիւնները, Ժանոթութիւնները հանուսի մասին, Ղիսիէոսի թրակացու քերականութիւնը, Պապ Աղէքսանդրացու աշխարհագրութիւնը, Յուլիանոս Ափրիկանոսի ժամանակագրութիւնը, Յովսէփ Փլաքիոսի պատմութիւնը, Ղիսէորոս Աիկիլիացու պատմական մատենագրութիւնը, Օլիմպիոգորոսի, Կալիմախի եւ ուրիշների աշխատութիւնները, Մենք չենք խօսում այն թարգմանութիւնների մասին, որոնք Ե. դարից յետոյ եղած են:

(**) *Տես հեղինակի Բաւսիքէն գրված ո Հետադատութիւն հայկական լեզուի կողմնութեան մասին* • 1864. Գաւառացան, XIV, նամուսպէս ո Հետադատութիւն հայկական լեզուի բարբառների մասին • 1869, Գաւառացան:

քան թէ այն, որը գործ կածէ ներկայումս Հայերի մեծ մասը: Երբորդ, աղքատ, չմշակված լեզուն յունական գրականութեան ազդեցութեան տակ գրաւոր լեզու գոռնալով, պէտք է սկզբում փոխ առնէր յունական լեզուից ոչ թէ միայն յատուկ բառեր (термины) և տեխնիկական ոճեր, այլ և բառերի մեծ մասը վերացական գաղափարներ և մտքեր յայտնելու համար: որոնք օտար էին չլուսաւորուած ժողովրդին: Սորա փոխանակ մենք կգտնենք լեզուի մէջ արդէն պատրաստ և ամենքին հաւասարապէս մատչելի բառերը: Եթէ այս գրականական լեզուի մէջ կգտնվին ևս օտարազգի շատ բառեր, սոքա մեծ մասամբ ոչ թէ յունական, այլ պարսկական և պաշլաւական են: Ի հարկէ, դանաղան մատենագիրներին մէջ նկատելի են նոր բառակազմութեան փորձեր, մանաւանդ փիլիսոփայական բառերին, յունական բառակազմութեան օրինակին համաձայն, բայց այդպիսի փորձերն համեմատաբար շատ քիչ են, և այն ևս լեզուն շուտով թոժափեց իւրեանից իւրեան անազգակից բառեր: Այսպէսով մենք իրաւունք ունինք մտածելու, որ հայկական տառերի դիւտից յառաջ կար մի դիտնական, արհեստական լեզու, որը շատ տարբեր էր ժողովրդականից թէ բազրքով և թէ ձևերով: Եւ այդպիսի արհեստական, պայմանական լեզու, որ յայտնի էր բոլոր մատենագիրներին և կոչված է Է-Է-Է այսինքն գրաւոր, ենթադրել կտայ անշուշտ գրականութիւն կամ նորա գործածութիւնը գրութեան մէջ: Այս բանի վերայ մենք պիտի կանգնինք: Աւելի շօշափելի ապացոյցներ հայկական գրականական լեզուի գոյութեան մասին մինչև Ե. դարի սկիզբը մենք չունինք: Այս դարից առաջ ոչ մի յիշատակարան չէ հասած մեզ: Ե. դարի բոլոր մատենագիրներն, որոնք Հայաստանի զանազան ծայրերում կգրէին, շատ անգամ տեղեկութիւն չունենալով միմեանց մասին և միմեանց աշխատութիւնների վերայ, կարծես թէ պայման են դրած միմեանց մէջ խորի, լուրթիւն պահպանելու մինչև նոցա ժամանակն եղած հայկական լեզուի և գրականութեան գրութեան մասին: Մենք մինչև այժմ չենք կարող գտնել ուղիղ պատասխան նոցանից այն մասին թէ Հայերն ի՞նչ լեզուով կգրէին, գործ դնելով պարսկական, ասորի և յունական տառերն, որի մասին նոքա շատ անգամ կխօսեն*): Հայկական

(*) Օրինակի համար յառաջ բերենք Խորենացու մէջ գտնված այդպիսի տեղերից ամենապարզը (Ա. 3.) « Ամենեցուն մեզ յայտնի է թագաւորացն մերոց եւ այլոցն առաջնոց առ ի յիմաստն ազամարութիւն եւ անկատարութիւն ոգւոյն բանականի, Զի թէպէտ եւ եմք ածու փոքր, եւ թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, եւ զօրութեամբ տկար եւ ընդ այլով յոյժ անգամ նուաճեալ թագաւորութեամբ, սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս, եւ արժանի գրոց յեջատակի, զորոց եւ ոչ մի որ ի նոցանէ պէտք յանձին կալաւ մատենագրել Այլ ասիցէ որ արդեւք, վասն ոչ լինելոյ գիր եւ դպրութիւն ի ժամանակին, կամ վասն պէս պէս պատերազմացն, որ կուռ դմմեանց զկնի անհետ ի վերայ գային: Այլ ոչ արդարեւ այսօրեկ կարծեցեալ լինին, քանզի գտանին եւ միջոցք լեալ պատերազմացն, եւ գիր Պարսից եւ Զունաց, որովք այժմ գիւղից եւ գաւա-

տառերի գիւտի պատմութիւնը, մի եղելութիւն, որը Հայաստանի մէջ մեծ յեղափոխութիւն յառաջացրեց, մեզ համար միայն կ'մնայ. մինչդեռ նորա մասին կ'սօսեն Ե. դարի լատգոյն մատենագիրներն և նոյն ինքն հայկական տառերը գտնողի աշակերտները: Բնագհանրապէս խուզարկողն այդպիսի օտարոտի բաներ շատ կ'գտնէ հայկական հնութիւններ ուսումնասիրելիս:

Պարսկական, յունական և ասորի լեզուների գործածութիւնը պաշտօնական յիշատակարանների մէջ, աներկբայելի է: Քրիստոնէութիւնն ընդունելուց յետոյ Հայերի թէ ժամերգութիւնը կկատարվէր ասորի լեզուով և թէ բոլոր կրօնական գրքերը գրված էին ասորերէն: Անահայրեր, եպիսկոպոսներ և ուրիշ պաշտօնական անձներ կընտրվէին ասորիների մէջից, այնպէս որ քրիստոնէութիւնն ընդունելուց Գ. դարի սկզբից մինչև գրեթէ գիւտը, Ե. դարի սկիզբն, պէտք է համարել մի այնպիսի ժամանակ, որի մէջ բացարձակ կտիրապետէր Հայաստանում ասորի գրականութիւնն:

Այս ժամանակում Հայերի ուսուցիչն և միակ մտաւորական պաշար մատակարարողն ասորիներն էին: Գեա ևս Գ. դարում Բարդաճան աղանդաւոր գրեց Հայաստանի պատմութիւնը, որի հատուածները Խորենացու մէջ կ'գտնվին: Քրիստոնէական դարում Զենոբ Գլակ Ասորի գրեց ասորերէն Հայերի քրիստոնէութեան հաւատն ընդունելու պատմութիւնը: Այդպիսի հանգամանքներում ոչինչ զարմանալի չէ, որ մի որևէ ասորի գիտնական ցանկացած լինի գրել Հայերի համար ամբողջ պատմութիւնն, երբոր վերջիններս կամեցած են իմանալ իւրեանց պատմութիւնը: Ինչպէս այժմ, ևս առաւել այն ժամանակ, Միջագետքում կընակէին բազմաթիւ Հայեր: Քրիստոսի ծննդից յետոյ Բ. դարում նոքա այնտեղ այնքան շատ էին, որ Եղեսիայի և Մծբնի նման քաղաքները կհամարվէին հայկական, և մինչև անգամ հայկական թագաւորների մայրաքաղաքներ: Հայերի հետ յաճախ և մերձաւոր յարաբերութիւնների ժամանակը դժուար չէր գիտնական Ասորուն ծանօթանալ նոցա աւանդութիւնների և ասացուածների հետ և կազմել նոցա հիման վերայ մի կարգաւորված պատմութիւն Հայաստանի*)

Այս եւս եւ իւրաքանչիւր տանց առանձնականութեանց, եւ հանուրց հակառակութեանց եւ դաշանց այժմ առ մեզ դտանին անբաւ գրուցաց մատեանդ, մանաւանդ որ ի սեպհական աղատութեանն պայազատութիւնս, և ինչ լեզուով էին արդեօք այս յիշատակարաններն, Պէտք է ի նկատի ունենալ, որ խօսքն հայկական տառերի գիւտից յառաջ եղած ժամանակի մասին է:

(*) Սեբեոսի (Է. դար.) եւ Թովմայ Արծրունու (Ժ. դար.) պատմական գրուածների մէջ Հայաստանի հին պատմութիւնը շարայարելիս, բացի Խորենացու համաձայն պատմածից, կպատահի շատ բան, որ նորան հակառակ է: Նոքա յառաջ կբերեն թագաւորների ուրիշ անունները եւ ուրիշ քաղաքործութիւնները: Այս բոլորն մեր կտրծիքով կհաստատեն թէ Հայաստանում եղել են պատմական աւանդութիւններ, եւ թէ մինչև Կար—Աբասը փորձ էին փորձած կազմել Հայաստանի ուրբան եւ իցէ ամփոփ պատմութիւնը: Կար—Աբաս, ինչպէս կերեւի, օգուտ է քաղած այս աւանդութիւնների մի որ եւ է ժողովածուից եւ նոցա մշակած է իւր ճաշակին համաձայն:

անցած վիճակների մասին: Թէ Հայերի մասին Մար - Աբասի բոլոր պատմածի մէջ կան հայկական հին աւանդութիւններ, կերևի նորանից, որ Խորենացին յառաջ բերելով Մար - Աբասից քաղուածներ, գրեթէ ամեն ունիւն կաւեղացնէ իւրեանից, որ նորա (այսինքն Մար - Աբասի հաղորդած փաստերը) կարդարանան նորա ժամանակում գտնված ժողովրդական աւանդութիւններով և երգերով: Բայց ժողովրդական աւանդութիւններն, երգերն, և ին այն ժամանակ միայն ունին պատմական երևելի նշանակութիւն, երբոր նորա պահպանված են նոյն ձևով, ինչ ձևով որ ժողովուրդն ստեղծած է: Փոխադրեցէք բանաստեղծական շարադրութիւնն արձակ շարադրութեան, տուէք չոր ու ցամաք բովանդակութիւն երգին, դուք զրկելու էք նոցա հոգուց և մարմնից, և ունենալու էք ձեռներում անկենդան կրմախ, որ կորցրած է նորան կենդանացնող ժողովրդական ոգին: Ժողովրդական բանաստեղծութեան շարադրութիւնների հետ պղպէս վարվելու ժամանակը բանաստեղծական տարրի հետ միասին կանհետանայ նաև նոցա պատմական նշանակութիւնը: ուստի այն պատմաբանները շատ կսխալվին, որոնք մերկացնելով ժողովրդական աւանդութիւնների բունը իւրեանց աւելորդ երևեցած հնարած մոքերից, այս բունը պատմութիւն լինել կկարծեն և համարել կտան:

Այսպէս վարվեցաւ Մար — Աբաս Ասորին հայկական աւանդութիւնների հետ, և միայն Խորենացու յաւելուածների շնորհով, մեք կտեսնենք նորա պատմութեան մէջ ոչ թէ ստայօգ բաներ, այլ այնպիսի փաստեր, որոնք ժողովրդական աւանդութիւնների հիմն են *): Բայց Խորենացու չափազանց զգուշութիւնը, ժողովրդական բանաստեղծութեան մասին հասկացողութեան պակասութիւնը, նորա կոյր հաւատը դէպի յունական պատմաբաններն և արհամարհանքը դէպի անգիր յիշատակարաններն, եթէ սոքա համաձայն չէին գրքերում կարդացածին, պատճառ էին որ մեզ չհասան Հայերի իւրեանց հնութեան մասին ունեցած ժողովրդական հայեացքի կենդանի արձագանգները: Նա ոչ թէ վիպասանական երգեր պահպանեց մեզ համար, այլ նոցա չոր ու ցամաք և համառօտ բովանդակութիւնն, Հայերից յարգված առաջին պատմաբանի օրինակը կորստական աղդեցութիւն ունեցաւ յաջորդ պատմաբանների վերայ, որովհետև նորա ամենքն, իւրեանց քիմքերի համաձայն, քննական աչքով կնայէին ժողովրդական բանաւոր գրականութեանը, և կհետեւէին Խորենացու օրինակին, այսինքն նորա նման չոր ու ցամաք և համառօտ քաղուածներ անելով յօրինեցին, սակաւ բացառութեամբ, մի ամբողջ պատմական գրականութիւն, որ կաղմված է ոչ թէ անցքերի մասին կենդանի պատմածներից, այլ չոր համառօտադրութիւններից: Ի հարկէ միայն Խորենացու աղդեցութիւնն չէր, այլև ուրիշ

(*) 8th Revue de deux Mondes, 1852 №. 225—255, Պ. Գիւլօրիէի յօդուածը: Les chants populaires de l' Arménie.

պատճառներ ևս, օրինակ կեանքի և մտքերի միայնակեցական ուղղութիւնը, քաղաքական անյաջող հանգամանքներն մեծ դեր կխաղային, սակայն Խորենացին այնու ամենայնիւ ուղղութիւն տուեց հայկական պատմական զբաղեցումները, որ հալածեց իւրեանից բոլորն ինչ որ բանաստեղծութեան կամ ժողովրդի խակական կեանքին կվերաբերվէր:

Եղեւսիոյի դպրոցի ծաղկած դրութիւնը, սկսելով Քրիստոսի ծննդից յետոյ երկրորդ դարից, յառաջացրեց հարուստ պատմական գրականութիւնը, որի աղբիւրը Արամէական հին գրականութիւնն էր, վերջինս շարունակութիւն էր այն գրականութեանը, որի ներկայացուցիչն էր Բերող: Խորենացին (Բ. 10, 38) կասէ, որ այս ժամանակում Հռոմայեցիներն հիմնեցին Եղեւսիայում երկու դպրոց, ասորի և յունական: Նոյնտեղ փոխադրեցին մեհենական զիւանդ, որ կգտնվէր Սինոպում: Խորենացին, անձամբ ծանօթ լինելով Եղեւսիայի զիւանի հետ, շատ անգամ կխօսի իւր պատմութեան մէջ այս զիւանի պատմական գրութեանը: Հարուստ լինելու մասին, որից օգուտ կքաղէին Յուդիստոս Ափրիկանոս, Եւսեբէոս և այն ժամանակի ուրիշ շատ ասորի ժամանակագիրներ, Նոյնտեղ Բ. դարի վերջում և Գ. դարի սկզբում ծաղկեցաւ Բարդաան և գրեց իւր շարադրութիւնը, Բայց Եղեւսիայում արժէք ունեցող և տաղանդաւոր շատ գրքերի հետ կգրվէին նաև գրքեր շահախնդրական ուղղութեամբ, կմշակվէին պարականոններ և սովորական դարձան խաբէութիւններ և կեղծիք: Մեր կարծիքով, վերջինների թուին կպատկանէր նաև Մար—Աբասի գրութեան: Եւ նորա օրինակը բոլորովին միայնակ չէ հին ասորի գրականութեան մէջ: Միևնոյն Խորենացին, որ հաւատ ընծայեց Մար—Աբասի յառաջարկին, միևնոյն հաւատարմութեամբ կդիմէ և ուրիշ մատենագրին, որ վերջարանի մէջ իւրեան կանսւանէ Աբգար Եղեւսացու և Փրկչի ժամանակակից: Մեր խօսքը Վարուբնայի կամ Ղերութնայի մասին է, որ օրինակողի սխալմամբ Խորենացու մէջ կոչված է Ղերութնայ: Խորենացին Բ. գրքի 12. զլիսում պատմելով Սանատրուկի և Աբգարի գործերը, մատնանիշ կլինի այս Ղերութնայի վերայ և յառաջ կրերէ նորա Եղեւսացիների Քրիստոսի ծննդից յետոյ Ա. դարի կէսում ընդունած քրիստոնէութեան մասին գրած պատմութիւնը:

Այս շարադրութեան բնագիրն երկար ժամանակ կորած կհամարվէր, բայց վերջին ժամանակներս գտնվեցաւ Փարիզի մատենադարանում հայկական ձեռագիրների մէջ և արդէն հրատարակված և թարգմանված է մի քանի անգամ *): 1864 ին Ղերութնայի ասորական բնագիրն գտնվեցաւ և

(*) Հայկական բնագրի Ֆրանսերէն թարգմանութիւնը հրատարակված է այս վերնագրով. *Lettres d' Abgar ou Histoire de la conversion des Edesséens*, par Labou-
bna, écrivain contemporain des apôtres, traduite sur la version arménienne du
V-e siècle. Venise 1868. Երկրորդ թարգմանութիւնն հրատարակված է Collection

տղազրվեցաւ զօկտօր Նիւրեմոնի *) Տրատարակուած թիւնների մէջ, այնպէս որ մենք ինքներս կարող ենք դատել այս աշխատութեան արժանաւորութիւններն և ճշգրտութիւնը Թէ հայկական և թէ ասորական բնագիրների Տրատարակողներ Ղերութնային բողոքովին հաւատ կընծայէին և բոլորն ինչ որ Ժամանակին անհամապատասխան էր, կհամարէին վերջին ժամանակի յաւելուածներ, Նոքա, Խորենացու նման, հաւատ կընծայէին այն յաւելուածին, որ կգտնվի երկու բնագիրների մէջ, և Խորենացու ու Եւսերէոսի Hist. Eccl. I, 13) քաղուածների մէջ: Ահա այն յաւելուածը, որ թարգմանված է ասորերէնից և հայերէնից. « Եւ թագաւորութեանն Արգարու թագաւորի և ամենայն թագաւորաց զամենայն ինչ զոր հրամայեն թագաւորքն, և զամենայն որ ինչ միանգամ լինի խօսք առաջի նոցա, զրի և զնի ի տունս յիշատակաց, Սոյնպէս և յՈւռհա քաղաքի Ղաբուրնա որդի Անակայ, որդւոյ Արշազարայ զպրի թագաւորին, զրեաց զամենայն ինչ որ միանգամ իրք եղեն Աղդէի առաքելոյ իսկզբանէ մինչև ի կատարած, միարանութեամբ ձեռնարկելով և Անանայ հաւատարմի թագաւորին, և եղին ի տան յիշատակաց քարտիսից, ուր զնին մատենաք և օրէնք արքունականք, և որք զնին և վաճառին. և զրին ի միջի նոցա մուրհակք հաստատութեան, անգպահին հաստատութեամբ, Ասորի խմբագրութեան մէջ այսպէս է. « And as is the custom in the Kingdom of the King Abgar, and in all Kindgoms that wuhatsoever the King orders and whatsoever is spoken in his presence is committed to writing and laid up among the records, so also Labnba, **) son of Senac, son of Ebedshaddai, the Kings scribe wrote these things of Addaeus the Apostl from the beyiuning to the end, wile Hanan the tabularius, the king 's sharir, set to the hand of wittness, and placed it amang the records of the kiugs where the ordinances and the laws are laid up, and there the contracts of the buyers and sellers are kept with care, without any negligence whateier ... Կարծես, ինչ

des historiens anciens et modernes de l' Arménie, t. I, 1867, այս վերնագրով. Léoubna d' Edesse - Histoire d' Abgar et de la prédication de Thaddée, եր. 313 331.

(*) Տես Ancient Syriac Documents relative to the earliest establishment of christianity in Edessa and the neighbouring countries, from the year after our Lords ascension to the beginning of the fourth century discovered, edited, translated and annoted by the late W. Curteon... with a preface by W. Wright, London. 1864:

(**) Օտարութի է, որ քննութեան հեղինակը « Collection des historiens » H. E. (götting. gelehrt. Aneig. 24 յունիսի, 1866, եր. 1039), խօսելով Նիւրեմոնի դատած ասորի բնագրի մասին, գրականապէս կհաստատէ որ նորա մէջ չէ գտնվում ձեռագրի հեղինակի անունը, մինչդեռ նա կգտնվի անգլիական թարգմանութեան եւ նոյնպէս ասորի բնագրին մէջ յաւելուածի միւսումնաւորման տեղն, ինչպէս հայկականին մէջ: Տես անգլիական թարգմանութեան 23 երեսը:

կարող է աւելի ազդու և համառօտ խօսել այս յիշատակարանի հնութեան և իսկութեան մասին քան թէ այս յաւելուածն, Սակայն եթէ ուշադրութեամբ կարդանք զիրքը, հեշտութեամբ կիմացվի որ նա Գ. դարից վաղ չէր կարող գրվել, Գրքի հեղինակն ունէր իւր պատճառները ծածկելու իւր ժամանակն բարեպաշտ ընթերցողներին:

Միւսնայն խարէութիւնը գործ է դրած, մեր կարծիքով, Խորենացու հին պատմութեան զխաւոր աղբիւրը Մար-Աբաս-Վատինան, որ ապրեց ոչ թէ Քրիստոսի ծննդից առաջ Բ. դարում, այլ Քրիստոսի ծննդից յետոյ Գ.—Գ. դարում, և ժողոված է իւր տեղեկութիւնները ոչ թէ Նինուէի ղիւանատներում, որոնք բոլորովին անմատչելի էին նորան, այլ իւր երկրում Միջագետքում, Մծրինում և Եդեսիայում, ուր ղժուար չէր ասորի գիտնականին կազմել հայկական աւանդութիւնների, ժողովրդական ասացուածների, ժողովրդական բառազննութեան և նորա ժամանակում յայտնի Լուսերէոսի պատմական գրուածների և ուրիշների օգնութեամբ մի կանոնաւոր պատմած Հայաստանի հին պատմութեան մասին, օրինակ առնելով այն ինչ որ Վտեղիոս կ'պատմէ Ասորեստանի թագաւորութեան մասին *):

Բայց մենք զեռ ևս չվերջացրինք Մար-Աբասի յառաջաբանի քննութիւնը:

Նա այսպիսի խօսքերով կսկսվի. «Արշակ մեծ արքայ Պարսից և Պարթևաց, որ և ազգաւ իսկ Պարթև, ապստամբեալ, ասեն, ի մակեդոնա-

(*) Լանդուա իւր յօդուածում. Etudes sur les sources de l'Histoire d'Arménie de Moïse de Choréne. Bulletin. Հ. III, եր. 343) կնկատէ Մար-Աբասի գրուածքի մէջ մեկնութեան (синкретизма) պարզ նշաններ, որոնք, նորա կարծիքով, ապացոյց են այն բանի, թէ Մար-Աբասի գիրքը գրված է քրիստոնէութեան դարից փոքր ինչ յառաջ, իսկ ինչ որ կ'իւրաքերվի դեսպանութեանը, որ ուղարկած էր Վաղարշակը Նինուէ Խլնաթի գիւաններն խուզարկելու համար, եւ այս ճանապարհորդութեան բոլոր մանրամասնութիւններն, Լանդուա այս բոլորը կ'համարի առակ եւ Խորենացու հնարած: Կա կիւարծէ որ այս հնարածը Խորենացու կողմից նուրբ կ'իղծաւորւի իւր է Սահակ Բագրատունու առաջ, որին նա կ'նուիրէ իւր գիրքը, Սահակ Բագրատունին որ կ'յանձնէ Խորենացուն գրել Հայաստանի պատմութիւնը, այս պատմութիւն մէջ գրիւթ է հաւաստարած է Վաղարշակին, որ ուղարկած է Սորի գիտնականին Նինուէ դռնէլու նայն պատմութիւնը . . . Մենք ի հարկէ. չենք կարող համաձայնել հանգուցեալ Լանդուայի այս կարծիքին: Իւր պատմութեան մէջ, Խորենացին չգիմելով ուրիշ միջոցներն, կարող էր ասել շատ փաղաքշտկան խօսքեր իւրան Բագրատունու Այստէս նա յառաջ կ'երբէ այս իշխանական ազգի ցեղապետի ծագումը մի երեւելի հրեայից, որ բերված էր Հայաստան հազուադուրսորի ձեռով: Վերջին ժամանակներն Վրաստանի մէջ թագաւորող Բագրատունի ցեղապետութիւնն օգուտ քաղեց Խորենացու այս ցուցմանից եւ իւր ծագումը կ'համարէր ուղղակի Դաւիթ թագաւորից (մարգարէից): Եթէ կտրելի է Խորենացուն որ եւ է բանի մասին մեղադրել, դա չափազանց հաւատ ընծայելու եւ պատմական քննութեան սրահասութեան մասին է, բայց ոչ երբէք խաբէութեան մասին:

ցւոցն և թագաւորեալ ի վերայ ամենայն արեւելից և ասորեստանեայց, և սպանեալ զԱնտիոքոս թագաւոր ի Նինուէ: Հնազանդեցուցեալ զամենայն տիեզերս ընդ իւրով ձեռամբ: սա թագաւորեցուցանէ զեղբայր իւր զՎաղարշակ ի վերայ աշխարհիս Հայոց: «Այս փոքրիկ հատուածի մէջ կգտնվի մի քանի պատմական նշանաւոր անստուգութիւններ: Խորենացու ժամանակագրութեանը նայելով, Մեծն Արշակ կարող էր թագաւորել 153 կամ 141 թուին Քրիստոսի ծննդից առաջ: Եթէ մենք ընդունենք առաջին թուականը, այն ժամանակը կերևի, որ նա չէր կարող բարձրացնել հայկական գահի վերայ Վաղարշակին, որը նորա ժամանակագրութեանը նայելով, սխառ է թագաւորել 150 թուին Քրիստոսի ծննդից առաջ: Մինչդեռ Արշակը նորանից յետոյ գեռ ևս ապրից շատ տարի: Ընդունելով երկրորդ թիւը, որ աւելի մօտ է ընդհանուր կարծիքին, կհանդիպինք մի ուրիշ անյարմարութեան: Մար - Աբասի խօսքերին նայելով, Արշակը բարձրացրեց հայկական գահի վերայ իւր եղբորը Անտիոքոսին սպանելուց յետոյ, բայց այս վերջինս կարող էր լինել միայն Առաջին Սիդէացի, որը թագաւորած է 139 թուից մինչև 131 թիւը, որ և բոլորովին կփոխէ նորա հնարած ժամանակագրութիւնը, և որով Վաղարշակ Հայաստանի թագաւոր կգտնայ 131 թուից յետոյ: Բացի նորանից, Խորենացին (Բ, 2), ըստ ամենայն հաւանականութեան, միևնոյն Մար - Աբասի հիման վերայ, կասէ թէ Արշակը, Սիդիացի Անտիոքոսին սպանելուց յառաջ, յաղթեց Քեմետրի Նիկատորին: Իսկ Յուստինոսից (Գիրք ԼԷ, Գ.) մենք կիմանանք որ ոչ թէ Քեմետրի յաղթօղն սպանեց Անտիոքոսին, այլ մի ուրիշն, այսինքն ոչ թէ Միհրդատ Ա. այլ Քրատո Բ. Այն մարդի համար, որ իւրեան Մեծն Արշակի (Միհրդատ Ա.ի 174-138) և Վաղարշակի ժամանակակից կանուանէ, և որը անձնական յարաբերութիւններ ունեցած է նոցա հետ, աններկի են այսպիսի անստուգութիւններ, որ հետազոտողի մէջ նոր կասկածներ կյարուցանեն: Մենք գիտենք, որ պարթևական թագաւորների պատմութիւնը և ժամանակագրութիւնն ամենամոթ և խճողված պատմութիւններից և ժամանակագրութիւնից մին է: Բայց որից արդեօք մենք կարող էինք սպասել աւելի որոշ տեղեկութիւններ, եթէ ոչ Մար - Աբասից, որը ամեն միջոցներ պիտի ունենար ստոյգ իրողութիւններ մեզ հաղորդելու, գոնէ իւր ժամանակամիջոցի և իւր կեանքի այնքան նշանաւոր անցքի մասին:

Այսպէս, Մար - Աբասի փոքրիկ յառաջաբանի մէջ ինչին ևս որ ձեռք տունք, բոլորն երևեցաւ անհաստատ, քննութիւն չվերցնող, կասկածներ յարուցանող, և առիթ տուող, որ հեղինակի գրականական խաբէութիւն գործ դնելու մասին կարծիք տանենք:

Ամիոփենք մեր եղրակացութիւնները:

1) Մար - Աբաս չէր կարող այցելել Նինուէի դիւանատունը, որովհետև յիշեալ դիւանատունը բնականապէս անմատչելի էր նորան և ծածկվա էր կուտված հողի հաստ շերտով:

2) Նա չէր կարող օգուտ քաղել այս դիւանից, եթէ նա թողաւ թիւն ևս ստացած լինէր նորա մէջ մտնելու, որովհետեւ նորա ժամանակը բեւառգրբի ընթերցանութիւնը կորած էր: Նա կիսօտէ գրէր մասին, և ոչ թէ կռիւնքի և պայքարի մասին:

3) Նորա Ասորեստանի և Մարաստանի պատմութեան մասին հաղորդած տեղեկութիւններն առնված են Կտեղիոսից մնացած հատուածներից և ոչ թէ Նինուէի դիւանատնից, որը կպարունակէր իւր մէջ Կնիդիացի պատմաբանի տեղեկութիւններից բոլորովին հակառակ իրողութիւններ:

4) Աղէքսանդրի հրամանով թարգմանված, ասված գիրքը պարզապէս Մար - Աբասի հնարած է և միայն նորա երևակայութեան մէջ գոյութիւն ունէր:

5) Ինքն Մար - Աբասը կապրէր, որ մասամբ կապացուցանվի նորա աշուտով, քրիստոնէական դարում, եթէ միայն այս անունն անանուն հեղինակի հնարված չէ: Եթէ որ խսկութեամբ չէ կարելի որոշել նորա երբ լինելը, դոնէ կարելի է հաւանականութեամբ ենթադրել, որ նա գրել է Գ. — Դ. դարում Բրիտանիայի ծննդից յետոյ, այսինքն, Խորենացուց մօտ 100 տարի առաջ:

6) Մար - Աբասի աղբիւրներն՝ Ասորեստանի և Մարաստանի պատմութիւնը գրելիս՝ նորա են եղած, որոնցից Եւսեբիոս օգուտ է քաղած, և աւելի հաւանական է որ նոյն ինքն Եւսեբէոս եղած լինի: Հայաստանի պատմութիւնն յօրինելու համար նա օգուտ է քաղած հայկական և ասորեկան աւանդութիւններից, կապելով նոցա միմեանց Կտեղիոսի Ասորեստանի պատմութեան օրինակով: Մար - Աբասից բաժանվելուց առաջ, մենք պիտի դառնալք մի գրուածին, որից մինչև այսօր քիչ օգուտ կքաղէին Խորենացու պատմութեան քննական գնահատութեան համար: Մեր խօսքը է. դարի մատենագիր Սերէոսի մասին է, որի շարադրութիւնը գրանվեցաւ Էջմիածնի մատենադարանում և հրատարակվեցաւ Կոստանդնուպօլսում 1851 թուին: Սերէոսի գլխաւոր խնդիրն էր գրել Հերակլ կայսրի արշաւանքը դէպի Պարսկաստան Խոսրով Բ. թագաւորի դէմ: Բայց այն ժողովածուի մէջ, որտեղ կգտնվի Սերէոսի պատմութիւնը Հերակլ կայսրի արշաւանքների մասին, կգտնվին սկզբում երկու առանձին յօդուածներ, որոնք այն ժամանակին չեն վերաբերվում: Այս յօդուածներից երկրորդը համառօտ բովանդակութիւն է Խորենացու և Ստեփանոս Ասողկի (ՓԱ. դար) պատմութեան մի քանի գլուխների, անյայտ մատենագիրների մի քանի յաւելուածներով: Այս երկրորդ յօդուածը չէ կարելի Սերէոսի աշխատութիւն համարել: Իսկ գալով առաջին յօդուածին, որի մէջ պահված են Հայաստանի հնագոյն պատմութեան վերաբերեալ հատուածներ, այստեղ ևս չկան յարգելի պատճառներ ենթադրելու, որ նա Սերէոսի գրած համարվի, որովհետեւ Հերակլի բուն պատմութիւնը (Ժողովածուի երրորդ գլուխ) ունի առանձին յառաջաբանը և առանձին շարադրութիւն է: Բայց որովհետեւ առաջին յօդուածի հեղինակն անյայտ

է, իսկ հրատարակողը տպագրած է այն իբրեւ Սերէոսի պատմութեան առաջին զուլիսը ուստի մենք մինչեւ նորա անկի ճիշդ անունն գտնելը պիտի շարունակենք Սէքէոսի առաջին գլուխն անուանել: Այսպէս որ, այս առաջին զուլիսը որ շատ նշանաւոր է ներկայ դեպքում մեզ համար, չափազանց փոփոխութիւն է կրած արտագրողներից և մեզ հասած է սաստիկ խանդարված գրութեամբ և մոռացմամբ շատ բառերով բաց թողված:

Մենք ասացինք, որ Մար - Աբասին չեն կարգացած հայկական մատենագիրներից ոչ մինք ոչ Խորենացուց առաջ և ոչ նորանից յետոյ. Սերէոսի զբքի վերաբերմամբ մենք կկրկնենք մեր կարծիքը, բայց ոչ առանց թեւութեան: Ոչ որ Խորենացուց առաջ կամ յետոյ այն ձևով չէ ներկայացնում Մար - Աբասին, ինչպէս Խորենացին, բայց Սերէոս նորան փոքր ինչ ուրիշ կերպով կներկայացնէ Մար - Աբասին անունով, և այն խօսքերը որոնց նա գործ կածէ նորա աշխատութեան հետ իւր ծանօթութիւնը յայտնելիս, առանձնապէս կլուսաբանեն թէ նոյն ինքն Մար - Աբասին եւ թէ նորա կեանքի ժամանակը, հետեւեալ հատուածից կհամոզվենք մենք որ Խորենացուց Մար - Աբաս Սատինա նոյն ինքն է Սերէոսի Մարաբբա փիլիսոփայ Մծուրնացին: Գրքի նոյն իսկ սկզբում, Սերէոսը կամենալով Հայաստանի հին պատմութեան մասին խօսել, հետեւեալ կերպով կսկսէ իւր խօսքը. «Անդ հայելով ի մատենան Մարաբբայ փիլիսոփայի Մծուրնացուց, զոր եզիտ զրոշմեալ ի վերայ արձանի ի Մծրին քաղաքի յապարանսն Սանատրուկ հանդէպ զրան արքունական տաճարին, ծածկեալ յաւերածի արքունական կայնիցն: Քանզի զիւնս տաճարին այնորիկ խնդրեալ ի դուռն արքային Պարսից, և բացեալ զաւերածն վասն սեանցն ըստ դիպան արձանագրին զրոշմեալ ի վերայ վիմի զամս և զաւուրս հինգ (sic?) թագաւորացն Հայոց և Պարթևաց, յունարէն դպրութեամբ, զոր իմ գտեալ ի Միջագետս ի նորին (Մարաբբա) աշակերտացն կամեցայ ձեզ զըուցակարգել, քանզի այսու ունէր վերնագիրն այսպէս:

«Եւ Ագաթանգեղոս զրիշ գրեցի ի վերայ արձանիս այսորիկ իմով ձեռամբս զամս առաջին թագաւորացն Հայոց, հրամանաւ քաջին Տրդատաւ առեալ ի դիւանէ արքունի, զոր փոքր մի և ապա յիւրում տեղւոջն տեսցես զպատճէնն:»

Յետոյ կգայ Հայերի առաջին ցեղապետների դիւցազնական պատմութեան շարայարութիւնը, որը շատ բանի մէջ համաձայն է Խորենացու գրվածին, բայց շատ բանի մէջ ևս կտարբերի, այնպէս որ ոչ մի կերպով չէ կարելի ենթադրել, որ հեղինակը ուղղակի Խորենացուց փոխ առած լինի: Աւերեմենք կարդացինք Խորենացու մէջ գտնված Մար - Աբասի յառաջաբանի մէջ, որ Վաղարշակ թագաւորը հրամայեց փորագրել Մծրին քաղաքում արձանի վերայ յունարէն լեզուով այն պատմութեան մի մաս, որը բերած էր Մար - Աբաս Նինուէից, Այստեղ Սերէոսի մէջ կհանդիպենք այնպիսի մարդին, որ կարդացած է և արտագրած է այս արձանագրութիւնը, Արձանագրութեան փորագրութենից առաջ եղած հանգամանքներն և նոյնպէս

նորա փորագրութեան ժամանակն երկու հեղինակների մէջ ևս զանազան են: Սերէոսը արձանագրութեան գրելու ժամանակը Խորենացու յիշածից 500 տարի աւելի ուշ կորոշէ: Նա այն կվերագրէ Տրդատ Թագաւորին և նորա ատենադպիր Ագաթանգեղոսին: Տրդատը որ հայկական Թագաւորներէից առաջինն մկրտվեցաւ բոլոր իւր ազգով, կայրէր Գ. դարի վերջը և Դ. դարի սկզբում, նոյնպէս և իւր ատենադպիր Ագաթանգեղոսն, որ նոյն-չափ յայտնի անձն է *): Մենք արդէն վերեւ նկատեցինք, որ Խորենացու Մար - Աբասը չէր կարող Քրիստոսի ծննդից յետոյ Գ. — Դ. դարից վաղ լինել: Սերէոսի հատուածը շատ լաւ կհաստատէ մեր կարծիքը: Արձանագրութիւնը գրված է եղել, ըստ ամենայն հաւանականութեան Հայերի քրիստոնէութիւն ընդունելուց փոքր ինչ առաջ, և շնայելով փոքր նմանութեանը Խորենացու շարագրութիւնից բաւական կտարրերի: Մենք այնպիսի կէտին հասանք, որտեղ կարելի է մի ենթադրութիւն միայն առնել, որը կարող է համաձայնեցնել Մար - Աբասի մասին մեր վերեւ ասածը Սերէոսի հատուածի սկզբի հետ: Այն ենթադրութիւնն հետեւեալն է. Մար - Աբասը (կամ թէ նա, ով իւր անձը կմագցնէ նորա այս անունով) Գ. — Դ. դարի գիտնական Ասորին պատահամբ գտնված է Սերէոսի յիշած պալատի փորելու ժամանակը և արտագրած է այն արձանագրութիւնը, որի մէջ կբովանդակվէր Հայաստանի զիւցաղնական պատմութիւնը: Այս արձանագրութիւնը տարածվեցաւ զանազան կողմեր պատճեններով, որոնցից մէկն ընկաւ մինչեւ անգամ Սերէոսի ձեռը: Բայց սոյն այս արձանագրութիւն էր որ միտք տուաւ Մար - Աբասին յօրինելու Հայաստանի աւելի ընդարձակ և աւելի ամփոփ պատմութիւնը: Աւստի մի կողմից արձանագրութիւնն որ բաւական նշանաւոր յիշատակարան է, միւս կողմից Սերէոսի պատմութիւնը որ այն ժամանակն արդէն գրված էր, և երրորդ աւանդութիւններ, երգեր և ըն. բաւական նիւթ էին Ասորու համար յօրինելու պարագային:

(*) Ագաթանգեղոսը, Տրդատ Թագաւորի ատենադպիրը, կայրէր Քրիստոսի ծննդից յետոյ Գ. դարում, Նա թողած է մեզ Հայերի քրիստոնէութիւն ընդունելու նկարագրութիւնը, Նորա շարագրութիւնը, ենթարկվելով մեծամեծ աղճատումներին եւ փոփոխութիւններին, հասած է մեզ, Մինչեւ անգամ Ագաթանգեղոսի (Ն. դար) յուշարէն խմբագրութիւնը աւելի լիակատար է քան թէ հայկականը: Ագաթանգեղոսը հայկական տառերի դիւտից շատ առաջ կայրէր, հետեւաբար գրած է յունարէն կամ ասորերէն, եւ յետոյ նորա աշխատութիւնը թարգմանված է հայերէն: Պատճառ կայ երկբայելու, թէ այժմեան դռնված յունական խմբագրութիւնը նախնական լինի, որը մեր կարծիքով կորած է: Ղազար Փարպեցու խօսքերից կարելի էր հետեւեցնել, որ նորա ժամանակը Ագաթանգեղոսի գրքում կային Հայաստանի հին պատմութեան մասին տեղեկութիւններ, եւ ոչ միայն Հայերի քրիստոնէայ դառնալու պատմութիւն, Բայց Փարպեցու տուած բացագրութիւնը այս տեղում այնպէս մուծ է եւ տնորոշ, որ մեր խօսքը միայն ենթադրութիւն կմնայ (եր. 9): Ագաթանգեղոսի գրքի յունական խմբագրութիւնը զետեղված է Բաւմդիլատների մէջ եւ Collectionի մէջ Հ. Ա.

այն ժողովրդի համար որը չունէր դեռ ևս իւր սեպհական գիր և հետեւ-
յաւր հսկելն ևս չէր կարող թէ որքան ճիշդ է Մար - Աբասի շարագրու-
թիւնը: Սակայն այն հանգամանքը, որ Մարաբասի գիրքը, բացի Խորենա-
ցուց, անյայտ էր մնացած և չունէր ժողովրդականութիւն իւր ժամանակին,
ալէն յայտնի ցոյց կտայ, որ նա ժողովրդական հոգով շինված չէր: Մենք
ասացինք այն մասին արդէն որ իշխան Սահակ Բագրատունին ևս չէր հա-
ւանում, Խորենացին ստրկաբար կհետեւէր նորան:

Խորենացին կապրէր և կգրէր այնպէս ժամանակում, երբ տասնաւոր
Հայերը, որոնք իւրեանց ուսումն առած էին այն ժամանակի յունական
ամենալաւ դպրոցներում, կգրէին և կգործէին Հայաստանում: Ղազար
Փարպեցի, Աորիւն, Ադիշէ, Ադնիկ և ուրիշները թողած են իւրեանց ժա-
մանակի անցքերի նկարագրութիւններ, նոցանից Ղազար Փարպէին իւր
պատմութեան յարաջարանի մէջ կխօսէ այն պատմիչների մասին որոնք
նորա ժամանակից առաջ գրած են: Նա կյիշատակէ Ագաթանգեղոսին
Փաւստոսին, բայց ոչ մի խօսք չէ ասում Մար - Աբասի գրքի մասին: Եթէ
այս գիրքն այն ժամանակ որ և է լաւ անուն ունէր կամ յարգելի էր,
նա չէր անցնի առանց քանի մի խօսք ասելու նորա մասին: Ահա ինչ կասէ
նա կասկածելի գրքերի մասին. «Ագաթանգեղոս գրեաց և աւանդեաց մեզ
զստոյգ տեղեկութիւնս զանցից եղելոց . . . Իսկ զհետ սորա ըստ այլայլման
իրաց և ժամանակաց և զիպելոյ աշխարհիս Հայոց բազմամբոյն զարուց,
երբեմն խաղաղութեան, և երբեմն սաստիկ և անբաւ շփոթմանց, միարա-
նութեան առ միմեանս, և երկպառակութեամբ ճիշդքելոյ ի միմեանց, բա-
զումք սպրդեցին դալ յայսպիսի յայրատութիւնս. արք տգէտք և յան-
դրգունք գրեցին յինքեանց ճառս ընդունայնս և անպիտանաբանս, և
խառնեալ եղին ի գիրս զխաւն լսողաց. այլ ընտրող մտաց ճանաչի
յայտնապէս գիտնոց բանք, և անմտացն շաղիազիութիւնք: Քանզի են
ոմանք ի յոյնս, այլ մանաւանդ առաւել յԱսորիս:

Մեզ կթուի թէ, Ղազար Փարպեցին այստեղ կյիշէ այնպիսի գրքեր,
որոնց նմանը Մար - Աբասի պատմութեան անունով մի, մոլորեցրած է Խո-
րենացուն, և նորանից յետոյ բոլոր նորա կարգացողներին:

Ներկայ զխում մենք աշխատեցինք փոքր ինչ աւելի մանրամասն խօսել
Մար - Աբասի մասին քան թէ ինչ որ մինչև այժմ խօսված էր, և մեզ
մատչելի փաստերով ապացուցանել նորա գրականական կեղծութիւնը, որի
մասին արդէն վաղուց կարծիք կտանէին զիտնականներն: Բայց նոցանից մեծ
մասը խօսած է նորա վերայ, վեր ի վերայ, ի դէպ, այնպէս որ ընթերցողը
բոլորովին չէ համոզվում նոցա կասկածներով: Նս կսպասէի, որ ինձանից
աւելի հմտութիւն ունեցող մարդիկները ձեռնարկելու էին այս գործին և
այնուհետև հետաւոր լինելու էր որոշել զուտ պատմականը նորանից, ինչ
որ չէ պատկանում պատմութեան: Մի և նոյն ժամանակ հնազնունական և
ընդունակական նոր գիւտերը մեր հին տեղեկութիւնների վերաբնութիւնն
անհրաժեշտ կկացուցանէին: Աորը իւր համար տեղ կպահանջէ: Պէտք է

քննել չինր՝ բոլորն արդեօք այնտեղ արժէք ունեցող է թէ շատ կարեւոր բաների հետ միասին հաւաքւած է բաւականաչափ խոտան, որ պէտքէ դուրս ձգել, որպէս զի հնարաւոր լինէր տեղաւորել նորը պատշաճաւոր և աւելի համապատասխանող տեղում: Այս նորը ներկայ դէպքում, մեղ համար նինուէի, Վանի և Բիհնտանի քարային յիշատակարաններն են: Նոցա բովանդակութիւնը մեծ յեղափոխութիւն արաւ նախ Ասիայի ամբողջ հին պատմութեան մէջ, ուստի և Հայաստանի պատմութեան վերայ ևս պիտի ազդեցութիւն ունենար: Բայց նոցա իւրեանց պատշաճ տեղ տալու համար պէտքէ ամենից առաջ քննել, թէ արդեօք ունին նորա ուղղակի կապ այն բանի հետ, որ կ'պատմէր նոցանից դուրս: Մինչև այժմ Ասորեստանի միջոցի Հայաստանի պատմութիւնը մեզ բոլորովին ուրիշ կերպով կներկայանար, քան թէ իրականապէս էր: Հայաստանի կթուէր թէ առանձին իւր Նահապետական կեանքով, ապրած է, առանց մասնակցելու այն անցքերին, որոնք կաղմկէին Ասիային ժ. ից մինչև Չ. դարը: Բրիտոսի ծննդից առաջ, Մինչև իսկ նոր յիշատակարանները, որոնց թիւը օրեցօր կաւելանայ, կրանան մեր առաջ արեւելքի պատմութեան մոռացւած երեսները, և կենդանութիւն և շարժողութիւն կմտցնեն այն ժամանակների մէջ որոնք մեզ մեռած և անշարժ կերեւէին: Ամեն, ինչ որ մենք կարողացանք կարգաւ Ասորեստանի, Հայաստանի և Պարսկաստանի բեռնադիր յիշատակարաններում Հայաստանի պատմութեան վերաբերմամբ, այնքան սակաւ կ'յարմարի նորա, ինչ որ մենք սովոր ենք Հայաստանի պատմութիւն համարելու, որ մենք ստիպւած ենք աւելի խոր հայեացք ձգելու նորա վերայ, և նորա հաղորդած փաստերը պատմական քննութեան ենթարկել: Ներկայ գլխում մենք մասամբ քննեցինք Հայաստանի հին պատմութեան գլխաւոր աղբիւրը, հետեւալ գլխում մենք կաշխատենք քննել Մար-Աբասի պատմածի էութիւնը:

(Աշուր-Նափի):

Ա. Տ. Գ.

Փ Ա Ր Ի Ձ.

Համաշխարհային ճգնումն դէպի Փարիզ և այս երևոյթի պատճառներն: Փարիզի նշանակութիւնը Ֆրանսիայի համար: Մայրաքաղաքի անցիալը: Ֆրանսական լեզուն և նորա նշանակութիւնը:

Փարիզն ամբողջ Ֆրանսիան է. ոչ, նա աւելի է, նա ամբողջ աշխարհին է. այս մայրաքաղաքը նկարագրել սկսելիս, ասում է ոչ միայն Ֆրանսիացին, այլև օտարն: Սա բոլորովին ճշմարիտ է: Փարիզը ունի համաշխարհային նշանակութիւն. ինչպէս որ Ֆրանսիային նոյնպէս և նորա ազդեցութիւնն սկսւած է շատ վաղ:

Եւ ժ.Ա. ժ.Բ. ժ.Գ. դարերից Ֆրանսիան ստանում է մեծ պատմական համբաւ: Այս ժամանակ Ֆրանսական լեզուն շատ տարածւած էր, նորա